ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/336

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.12.2021թ. թիվ 26/26-1/21046-2021 գրությամբ «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 15.12.2021թ. թիվ 01/61-31283 գրության հիման վրա, 21.12.2021թ. թիվ 26/26-1/21046-2021 գրությամբ նախաձեռնել է «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/336 ընթացակարգի շրջանակներում 27.12.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.12.2021թ. թիվ 01/61-31283 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով կենտրոնացված կարգով իրականացվող սննդամթերքի գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Դանինի ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը /այսուհետ՝ Ընկերություն/: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերությունը 1, 3, 4, 7, 8, 9, 10, 11, 19, 20, 21, 22, 23-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընկերությունն իր 09.12.2021թ. գրությամբ հրաժարվել է ընթացակարգի 1, 3, 4, 7, 19, 20-23-րդ չափաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ելնելով վերոգրյալից, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 4-րդ կետը, գնման ընթացակարգը 1, 3, 4, 7, 19, 20-23-րդ չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/336 ընթացակարգի շրջանակներում 27.12.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/336 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/336 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ և 23-րդ չափաբաժինների մասով, ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղն Երևանի քաղաքապետարանին ուղղված 09.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Դանինի» ՍՊԸ մ/ճ-ն հրաժարվում է կնքել Ձեր կողմից ուղարկված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով պայմանագիրը հետևյալ չափաբաժինների մասով.

1. 1-ին չափաբաժին՝ բուսական յուղ
2. 3-րդ չափաբաժին՝ հնդկաձավար
3. 4-րդ չափաբաժին՝ մակարոն
4. 7-րդ չափաբաժին՝ շաքարավազ
5. 19-րդ չափաբաժին՝ հավի կրծքամիս
6. 20-ից 23-րդ չափաբաժինները ներառյալ՝ տավարի մսեր»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 09.12.2021թ. «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացվել է գրություն ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 19-րդ, 20-23-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց հրաժարվելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.12.2021թ. թիվ 26/26-1/21046-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 15.12.2021թ. թիվ 01/61-31283 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից

որոշում է կայացվել «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ և 23-րդ չափաբաժինների մասով, ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղն Երևանի քաղաքապետարանին ուղղված 09.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Դանինի» ՍՊԸ մ/ճ-ն հրաժարվում է կնքել Ձեր կողմից ուղարկված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով պայմանագիրը հետևյալ չափաբաժինների մասով.

1. 1-ին չափաբաժին՝ բուսական յուղ
2. 3-րդ չափաբաժին՝ հնդկաձավար
3. 4-րդ չափաբաժին՝ մակարոն
4. 7-րդ չափաբաժին՝ շաքարավազ
5. 19-րդ չափաբաժին՝ հավի կրծքամիս
6. 20-ից 23-րդ չափաբաժինները ներառյալ՝ տավարի մսեր»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 09.12.2021թ. «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացվել է գրություն ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 19-րդ, 20-23-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց հրաժարվելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 09.12.2021թ., Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 19-րդ, 20-23-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.12.2021թ. թիվ 26/26-1/21046-2021 գրությամբ «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**